ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 28 >> 09 2011թ. N: 324-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԹԻԿԻ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԳՈՀԱՐ ՂՈՒԼԻՋՈՂԼՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 110-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Գոհար Ղուլիջողլյանի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի և Արսեն Պետրոսյանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի դիմումները.

որոշում եմ՝

1. 2011 թվականի սեպտեմբերի 28-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի N 5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Գոհար Ղուլիջողլյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. 2011 թվականի սեպտեմբերի 28-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի N 5 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Արսեն Պետրոսյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հովհաննես Մամիկոնյանին՝ սահմանված կարգով կազմակերպել հանձնում-ընդունում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկական՝ հետ ճիշտ է՝